ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 20-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը՝ «Քանզի բազումք յօժարեցին վերստին կարգել զպատմութիւն իրացն հաստատելոց ի մեզ» բնաբանով։*

* *
*

Հոկտեմբերի 27-ին, կիրակի, *Գյուտ խաչի տոնին, Մայր Տաճարում պատարագեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը։ Պատարագիչ սրբազանը քարոզեց «Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ զօրութիւն Աստուծոյ» բնաբանով։*

* *
*

Հոկտեմբերի 27-ին, կիրակի, *Մայր Աթոռ այցելեց ամերիկացի հայտնի գրող Ստայնբերգը իր տիկնոջ հետ։ Հարգելի հյուրերը հիացմունքով ունկնդրեցին Կոմիտասյան պատարագից մի քանի համարներ՝ Մայր Տաճարի երգչախմբի կատարմամբ։ Հյուրերը եղան Մայր Տաճարի եկեղեցական հնութիւնների պահարանում և մեկնեցին լավ տպավորութիւններով։*

* *
*

Հոկտեմբերի 29-ին, երեքշաբթի, *ավելի քան մեկ ամիս Հայաստանում հյուրասիրվելուց հետո, իր հայրենիքը՝ Ֆրանսիա վերադարձավ հայտնի հայագետ պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին։ Գիտնականը, Հայաստանում գտնված օրերին, հանդիպումներ ունեցավ Հայաստանի գիտութիւնների ակադեմիայում և մշակութային այլ հաստատութիւններում։ Հարգարժան հյուրը մեկնեց լավագույն տպավորութիւններով։*

Հոկտեմբերի 31-ին, հինգշաբթի, *Միլանոյից բանաստեղծ պր. Ա. Սրապյանը, որպես Մայր Աթոռի հյուրը շուրջ մեկ ամիս հայրենիքում մնալուց հետո, վերադարձավ իր բնակավայրը։*

* *
*

Նոյեմբերի 3-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Քարոզեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը՝ «Զիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի» բնաբանով։*

* *
*

Նոյեմբերի 6-ին, չորեքշաբթի, *Հոգևոր ճեմարանի ուսանողները, դասախոսական կազմի առաջնորդությամբ, շրջապտույտ կատարեցին Երևանի տեսարժան վայրերում։ Նրանք եղան Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում, Ալեքսանդր Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում, մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի նորաբաց տուն-թանգարանում։*

* *
*

Նոյեմբերի 9-ին, շաբաթ, *Մոսկվա մեկնեցին Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Ա. Հատիսյանը, այնտեղից ուղևորվելու համար Հնդկաստան և միանալու Վեհափառ Հայրապետի շքախմբին։*

* *
*

Նոյեմբերի 10-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։*